ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է

Մարտի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Հավարտ ժողովի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հավատավոր ժողովրդին ուղղեց իր հորդորը.

«Մեր Տիրոջ երկրային կյանքի փրկչական վերջին տնօրինությունները բովանդակող Ավագ Շաբաթվա մեջ ենք ամենքս: Կոչված ենք ոչ միայն հիշատակելու այդ խորհուրդները, այլև՝ ապրելու և զգալու, Փրկչի հետ տրտմելու, ապա Նրա հրաշափառ Հարությամբ ցնծալու և աստվածային անհուն սիրով վերափոխելու մեր հոգիները:

Թող այս շաբաթը մեզ համար դառնա ջերմեռանդ աղոթքի և ինքնամաքրման շրջան՝ առաջնորդվելու Աստծո և միմյանց հանդեպ սիրո մեծագույն պատվիրանով:

Աղոթենք առ Աստված և հայցենք Սուրբ Հոգու զորակցությունը մեր ժողովրդին՝ առ Հայրենին սիրով հաղթահարելու ներքաղաքական կյանքի այս ծանր փորձությունը, որպեսզի առատանան մեզանում հույսի և հավատի գործերը՝ ի խնդիր ազգային համերաշխության ու միաբանության և հայոց պետականության զորացման»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ